Հավելված N1
Հայաստանի Հանրապետության
պետական եկամուտների կոմիտեի նախագահի
2020 թվականի ապրիլի 17-ի
N 337-Ն հրամանի

Օրինակելի ձև

ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
Հիմնադրամի հոգաբարձուների
խորհրդի 30-06-2020 թ. որոշմամբ
«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ»
Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
հիմնադրամի 2019 թ. գործունեության մասին

1. Հիմնադրամի՝		
1.1 Լրիվ անվանումը		«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ
1.2 Գտնվելու վայրը		ԵՐԵՎԱՆ Տերյան 74
1.3 Պետական գրանցման համարը		222.160.00460
1.4 Պետական գրանցման տարին, ամիսը, ամսաթիվը		2005-02-24
1.5 ՀՎՀՀ-ն		02577018
1.6 Հեռախոսը (այդ թվում՝ բջջային)		+(374)94255525
1.7 Պաշտոնական ինտերնետային կայքը		www.icare.am
1.8 Էլեկտրոնային փոստը		info@icare.am
2. Հիմնադրի անուն, ազգանուն կամ անվանում՝		
3. Հոգաբարձուների խորհրդի անդամների անուն, ազգանուն՝		
Արմեն Ասատրյան		
4. Կառավարչի անուն, ազգանուն՝		
Արթուր Գրիգորյան		
5. Աշխատակազմում ընդգրկված անձանց քանակը	14	
6. Անձեռնմխելի կապիտալի չափը	0	
7. Անձեռնմխելի կապիտալի կառավարումից ստացված եկամուտ	0	
8. Ֆինանսավորման աղբյուրները՝		
8.1 Ֆինանսավորումն ըստ խմբերի	8.2 Ծրագրի անվանումը	8.3 Չափը
8.1.1 Պետական և համայնքային բյուջեներից դրամական մուտքեր		
8.1.2 Իրավաբանական անձանցից դրամական մուտքեր		
	ԱՄՆ միջազգային զարգացման գործակալությունից (USAID)/Վիրջինիայի տեխնոլոգիական համալսարանից՝ Ագրոբիզնեսի կրթության զարգացման նախաձեռնություն	44073717

BALANYAN HAYK 3509710107 Digitally signed by BALANYAN HAYK

	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակ, Սիրիայից տեղահանված անձանց և Հայաստանում տեղական բնակչության համար գինեգործության և ցինու բիզնեսի կարճ դասընթացների նախապատրաստում և անցկացում	4329170
	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակից, Բարձրորակ հեղուկ քրոմատոգրաֆի միջոցով նոր լաբորատոր և խորհրդատվական ծառայությունների մշակում ծրագրով միջանկյալ վճարում	3969520
	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակից, Աշխարհատեղեկատվական համակարգեր և հեռահար զոնդավորում առարկաները Աշխարհատեղեկատվական համակարգեր և հեռահար զոնդավորում հավաստագրային ծրագիր	2429500
	Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերակցության Հայաստանյան գրասենյակից, մաքսազերծման ծախսերի փոխհատուցում	66000
	ՄԱԿ-ի զարգացման ծրագրի գրասենյակ Հայաստանում(UNDP)-ՄԱԿ-ի ԶԳ "Կայուն Զարգացման Նպատակների Ֆինանսավորման հարթակ" և Նորամուծական լուծումներ Հայաստանում ԿԶՆ-երի ներդրման ծրագիր	23797999
	ՀՀ Համ.բանկի արտ.և լիազ.ներկայ-ից՝ Հայաստանում հողերի սեփականության և հողատարածքների ուսումնասիրության իրականացում	92008258
	Մաաստրիխտի մենեջմենթի դպրոցից՝ Գիտելիքային կարողությունների զարգացում էկոտուրիզմի գծով	11199573
	Եվրոքուալիթի Կազմակերպությունից՝ ԱՊՀ երկրների միջև գյուղատնտեսական առևտրի պոտենցիալի հետազոտություն	7240157
	Ավստրիական զարգացման գործակալությունից՝ Հայաստանում այգեպտղաբուծության ոլորտի զարգացման ծրագիր	186042500
	ՀՀ-ում Ճապոնիայի դեսպանատնից՝ ՀԱԱՀ-ի ուսումնաարտադրական ջերմատան վերափոխման (վերակառուցման) աշխատանքների իրականացում	32696622

	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության՝ կազմակերպությունից՝ Գյուղատնտեսական կարիերայի վերաբերյալ իրազեկման արշավ Հայաստանի ընտրված մարզերի դպրոցականների համար և Դպրոցական սննդի և սնուցման ծրագրի ազդեցության գնահատում գյուղատնտեսության ոլորտի առնչությամբ փորձնական նախագծի իրականացում	5781286
	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության՝ կազմակերպությունից՝ Կաթնամթերքի մշակման բարելավումը Հայաստանի Հանրապետությունում հետազոտական ծրագիր	9446225
	ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպությունից «ԱԳՐՈ-հետազոտությունների իրականացում Հայաստանում»	32430044
	Լաբորատոր փորձաքննությունների դիմաց ստացված վճարներ	6703800
	Գինեգործական ու ջերմատնային դասընթացների դիմաց ստացված վճարներ	11276832
	Վարձակալություն, ապահովագրական հատուցում, այլ	1534838
	Նվիրատվություններ	189613223
8.1.3 Ֆիզիկական անձանցից դրամական մուտքեր		
	Նվիրատվություններ	4910491
9. Հիմնադրի ներդրումը՝		
9.1 Դրամական միջոցներ	0	
9.2 Գույք	9.2.1 Տեսակը	9.2.2 Արժեքը
10. Նվիրատվությունները/ նվիրաբերությունները		
10.1 Նվիրատուները/նվիրաբերողներն ըստ խմբերի՝	10.2 Նվիրված/նվիրաբերված գույք	
	10.2.1 Տեսակը	10.2.2 Արժեքը
10.1.1 Հայաստանի Հանրապետություն/համայնքներ		
10.1.2 Իրավաբանական անձինք		
	Գինեգործական սարքավորումներ	552874
	Բենզին	104550
10.1.3 Ֆիզիկական անձինք		
11. Իրականացված ծրագրերը՝		
11.1 Ծրագրի անվանումը	11.2 Ծախսված գումարը	
Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոն	89303826	
Ագրոբիզնեսի կրթության զարգացման նախաձեռնություն	35284674	
Հարակայուն ձկնաբուծարաններ հանուն Հայաստանում ջրային ռեսուրսների բարելավման ծրագիր	23459031	

Աշխարհատեղեկատվական համակարգեր և հեռահար զոնդավորում վերապատրաստման ծրագրի մշակում և անցկացում	6544300
Սիբիայից տեղահանված անձանց և Հայաստանում տեղական բնակչության համար գինեգործության և գինու բիզնեսի կարճ դասընթացների նախապատրաստում և անցկացում	5667530
Բարձրորակ հեղուկ քրոմատոգրաֆի միջոցով նոր լաբորատոր և խորհրդատվական ծառայությունների մշակում ծրագրով միջանկյալ վճարում	5363350
Կաթնամթերքի մշակման բարելավումը Հայաստանի Հանրապետությունում հետազոտական ծրագիր	3039064
«ԱԳՐՈ-հետազոտությունների իրականացում Հայաստանում»	41181573
Գյուղատնտեսական կարիերայի վերաբերյալ իրազեկման արշավ Հայաստանի ընտրված մարզերի դպրոցականների համար և Դպրոցական սննդի և սնուցման ծրագրի ազդեցության գնահատում գյուղատնտեսության ոլորտի առնչությամբ փորձնական նախագծի իրականացում	19219703
«ԱԳՐՈ-հետազոտությունների իրականացում Հայաստանում» 2-րդ փուլ	749966
ՄԱԿ-ի ԶԳ "Կայուն Զարգացման Նպատակների ֆինանսավորման հարթակ" և Նորամուծական լուծումներ Հայաստանում ԿԶՆ-երի ներդրման ծրագիր	7422776
«Հայաստանում հողերի սեփականության և հողատարածքների ուսումնասիրության իրականացում»	75123860
Գիտելիքային կարողությունների զարգացում էկոտուրիզմի գծով	9072058
ԱՊՀ երկրների միջև գյուղատնտեսական առևտրի պոտենցիալի հետազոտություն	4862492
"ՀԱԱՀ-ի Ուսումնաարտադրական ջերմատան վերափոխման (վերակառուցման) աշխատանքների իրականացում"	31998910
Ագրոբիզնես Արցախի համար	3830384
Ծախսեր դասընթացների և այլ հատուցումների գծով	6078562
Ծախսեր լաբորատոր փորձաքննությունների գծով	5171940
12. Ֆինանսական տարում օգտագործված միջոցների ընդհանուր չափը	373373999
13. Կանոնադրական նպատակների իրականացմանն ուղղված ծախսերի չափը	373373999

Նշումներ՝

Եզրակացությունը և ֆինասնական հաշվետվությունները մեկ PDF ֆայլով են:

Կից ներկայացվում է աուդիտորական եզրակացությունը՝ ___30___թերթից:
թերթերի քանակը

Հիմնադրամի տնօրեն _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

Գլխավոր հաշվապահ _____
ստորագրությունը, անունը, ազգանունը

«ԱԳՐՈԲԻԶՆԵՍԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԵՆՏՐՈՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

2019թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Երևան-2020

Բովանդակություն

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 3
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 6
ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 7
ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 8
ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 9
2019թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ 10

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ
Երևան, Գյուլբենկյան 30/3, գրասենյակ 129
Հեռախոս՝ +374 10 229021, +374 60 529021
Էլ. փոստ՝ office@anaudit.am

ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին

Կարծիք

Մենք աուդիտի ենք ենթարկել «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» Հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) 2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտվող տարվա կից ներկայացվող ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են՝ առ 31 դեկտեմբերի 2019թ. ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը, այդ ամսաթվին ավարտվող տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը, դրամական հոսքերի մասին հաշվետվությունը և ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման քաղաքականության հիմնական դրույթների ամփոփագիրը:

Մեր կարծիքով ֆինանսական հաշվետվությունները, բոլոր էական առումներով, ճշմարիտ են ներկայացնում «Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» Հիմնադրամի առ 31 դեկտեմբերի 2019թ. ֆինանսական վիճակը և այդ ամսաթվին ավարտվող տարվա գործունեության արդյունքներն ու դրամական հոսքերը՝ ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին (ՖՀՄՍ-ներ) համապատասխան:

Կարծիքի հիմք

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս հաշվետվության՝ *«Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար»* բաժնում: Մենք անկախ ենք Հիմնադրամից՝ Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակած *Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի (ՀԷՄՍԽ կանոնագիրք)* և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների այս աուդիտի նկատմամբ կիրառելի անկախության և էթիկայի պահանջներին համապատասխան, և մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ այդ պահանջներին և ՀԷՄՍԽ կանոնագրքին համապատասխան: Մենք համոզված ենք, որ մեր ձեռք բերած աուդիտորական ապացույցները բավարար են ու համապատասխան, որպեսզի հիմք ապահովեն մեր կարծիքի համար:

Ղեկավարության պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Հիմնադրամի գործադիր ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման համար և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը ղեկավարությունն անհրաժեշտ կհամարի էական անճշտություններից (թե՛ սխալի, թե՛ խարդախության արդյունքում առաջացող) զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստման հնարավորություն ընձեռելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս՝ գործադիր ղեկավարությունը պատասխանատու է Հիմնադրամի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար՝ անհրաժեշտության դեպքում բացահայտելով անընդհատությանը վերաբերող հարցերը, ինչպես նաև հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքը կիրառելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է կամ լուծարելու Հիմնադրամը, կամ դադարեցնելու դրա գործունեությունը, կամ էլ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը պատասխանատու է Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակներն են՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում այն մասին, թե արդյոք ֆինանսական հաշվետվություններն, ամբողջությամբ վերցրած, զերծ են խարդախության կամ սխալի հետևանքով առաջացող էական անճշտություններից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի գոյություն ունեցող էական անճշտությունը: Անճշտություններ կարող են առաջանալ սխալի կամ խարդախության արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն օգտագործողների՝ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

Որպես ԱՄՍ-ներին համապատասխան իրականացվող աուդիտի մաս՝ մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն աուդիտի ողջ ընթացքում: Մենք նաև՝

- նույնականացնում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական անճշտության ռիսկերը, այդ ռիսկերից ելնելով նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են ապահովում մեր կարծիքի համար: Խարդախությունից առաջացող էական անճշտության չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալից առաջացողինը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին հսկողության համակարգի շրջանցում.
- պատկերացում ենք կազմում աուդիտին վերաբերող ներքին հսկողության համակարգի մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Հիմնադրամի ներքին հսկողության համակարգի արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով.
- գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը և ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների ու կից բացահայտումների հիմնավորվածությունը.
- եզրահանգում ենք կատարում ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և, հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա, գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն կապված դեպքերի կամ պայմանների հետ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Հիմնադրամի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրակացնենք, որ առկա է էական անորոշություն, ապա մենք պետք է մեր աուդիտորի եզրակացությունում ուշադրություն հրավիրենք ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, այդպիսի բացահայտումների ոչ համապատասխան լինելու դեպքում, ձևափոխենք մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են ընդհուպ մինչև մեր աուդիտորի եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա դեպքերը կամ պայմանները կարող են պատճառ հանդիսանալ, որ Հիմնադրամն այլևս չհամարվի անընդհատ գործող:
- գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, և այն, թե արդյոք ֆինանսական հաշվետվությունները պատկերում են դրանց հիմքում ընկած գործարքներն ու դեպքերն այնպես, որ ապահովվի ճշմարիտ ներկայացում:

Ի թիվս այլ հարցերի, մենք տեղեկացնում ենք Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդին աուդիտի պլանավորված շրջանակի և ժամկետների, աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողության համակարգի նշանակալի թերությունների մասին:

Սույն անկախ աուդիտորի եզրակացության համար հիմք հանդիսացած աուդիտի պատասխանատու ղեկավարն է՝

Արևիկ Հարությունյան

Որակավորված աուդիտոր

Արթուր Հարությունյան

Տնօրեն

«Էյ-Էն Աուդիտ» ՓԲԸ

Երևան

15 հունիսի 2020թ.

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Ծան.	31.12.2019թ.	31.12.2018թ.
Ակտիվներ			
Ոչ ընթացիկ ակտիվներ			
Հիմնական միջոցներ	6	159,836	67,125
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ	7	3,187	3,895
Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ		163,023	**71,020**
Ընթացիկ ակտիվներ			
Պաշարներ	8	2,695	1,628
Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ	9	33,728	18,031
Դրամական միջոցներ	10	327,687	125,094
Ընդամենը ընթացիկ ակտիվներ		**364,110**	**144,753**
Ընդամենը ակտիվներ		**527,133**	**215,773**
Սեփական կապիտալ և պարտավորություններ			
Կուտակված շահույթ		242,283	131,012
Ընդամենը սեփական կապիտալ		**242,283**	**131,012**
Ոչ ընթացիկ պարտավորություններ			
Ակտիվներին վերաբերող շնորհներ	11	41,718	45,111
Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ		**41,718**	**45,111**
Ընթացիկ պարտավորություններ			
Եկամուտներին վերաբերող շնորհներ	11	226,787	35,222
Շահութահարկի գծով պարտավորություն		406	78
Պայմանագրերի գծով պարտավորություն (ստացված կանխավճարներ)		2,228	1,183
Այլ պարտավորություններ	0	13,711	3,167
Ընդամենը ընթացիկ պարտավորություններ		**243,132**	**39,650**
Ընդամենը սեփական կապիտալ և պարտավորություններ		**527,133**	**215,773**

Տնօրեն

Արթուր Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Բալանյան

15 հունիսի 2020թ.

ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	**Ծան.**	**2019թ.**	**2018թ.**
Հասույթ	13	25,321	21,807
Ակտիվներին վերաբերող շնորհներից եկամուտ	11	9,442	8,064
Եկամուտներին վերաբերող շնորհներից եկամուտ	11	265,664	160,767
Նվիրաբերությունից եկամուտ	14	183,801	10,323
Այլ եկամուտներ		417	327
Աշխատակիցների հատուցումների գծով ծախսեր		(181,232)	(109,520)
Այլ աշխատանքի վարձատրություն		(58,046)	(97,218)
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների մաշվածություն		(16,866)	(11,435)
Գրասենյակային ծախսեր		(20,083)	(7,546)
Ուսանողների կեցության վճարներ և այլ օժանդակություն		(27,909)	(5,988)
ՀԱԱՀ ուսումնարտադրական ջերմատան վերակառուցման աշխատանքների ֆինանսավորում		(31,993)	-
Գործուղման և ներկայացուցչական ծախսեր		(25,095)	(13,538)
Վառելիք		(1,632)	(1,606)
Այլ ծախսեր		(9,190)	(13,022)
Փոխարժեքային տարբերություններից զուտ օգուտ (կորուստ)		-	(1,041)
Շահույթ (վնաս) նախքան շահութահարկով հարկումը		**112,599**	**(59,626)**
Շահութահարկի գծով ծախս	15	(1,328)	(980)
Տարվա շահույթ (վնաս) հարկումից հետո		**111,271**	**(60,606)**
Ընդամենը համապարփակ ֆինանսական արդյունք տարվա համար		**111,271**	**(60,606)**

Տնօրեն

Արթուր Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Բալանյան

15 հունիսի 2020թ.

ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Ընդամենը Սեփական կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2018թ.	**191,618**	**191,618**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	(60,606)	(60,606)
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2018թ.	**131,012**	**131,012**

Հազար դրամ	Կուտակված շահույթ	Ընդամենը Սեփական կապիտալ
Մնացորդն առ 1 հունվարի 2019թ.	**131,012**	**131,012**
Հաշվետու տարվա համապարփակ ֆինանսական արդյունք	111,271	110,731
Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2019թ.	**242,283**	**241,743**

ՀԻՄՆԱԴՐԱՄ FOUNDATION 02577018

Տնօրեն — Գլխավոր հաշվապահ

Արթուր Գրիգորյան — Հայկ Բալանյան

15 հունիսի 2020թ.

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը պետք է ընթերցվի սույն ֆինանսական հաշվետվությունների մաս կազմող՝ 10-ից 30-րդ էջերում ներկայացված կից ծանոթագրությունների հետ մեկտեղ:

ԴՐԱՄԱԿԱՆ ՀՈՍՔԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Գործառնական գործունեությունից դրամական հոսքեր		
Շնորհներից մուտքեր	512,788	106,943
Նվիրաբերություններից մուտքեր	16,726	10,323
Ծառայությունների մատուցման գծով մուտքեր	139,925	29,717
Նյութերի, ապրանքների ձեռքբերման գծով ելքեր	(20,911))	(13,201)
Ծառայությունների, աշխատանքների ձեռքբերման գծով ելքեր	(170,948)	(107,873)
Վճարումներ աշխատակիցներին և նրանց անունից	(143,870)	(123,229)
Գործուղումների գծով ելքեր	(9,267)	(12,817)
Ուսանողների կեցության ապահովում և այլ օժանդակություն	(95)	(5,959)
Վճարված հարկեր և այլ պարտադիր վճարներ՝ բացի շահութահարկից	(3,523)	(1,286)
Վճարված շահութահարկ	(1,000)	(1,000)
Այլ վճարումներ	(3,472)	(1,427)
Գործառնական գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**316,354**	**(119,809)**
Ներդրումային գործունեությունից դրամական հոսքեր		
Հիմնական միջոցների և այլ ոչ ընթացիկ ակտիվների ձեռքբերման գծով ելքեր	(113,872)	(9,579)
Ներդրումային գործունեությունից զուտ դրամական հոսքեր	**(113,872)**	**(9,579)**
Ընդամենը զուտ դրամական հոսքեր	**202,482**	**(129,388)**
Արտարժույթի փոխարժեքային տարբերություններ դրամական միջոցների գծով	111	(1,154)
Դրամական միջոցների մնացորդն առ 1 հունվարի	**125,094**	**255,636**
Դրամական միջոցների մնացորդն առ 31 դեկտեմբերի	**327,687**	**125,094**

Տնօրեն

Արթուր Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Բալանյան

15 հունիսի 2020թ.

2019թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԿԻՑ ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Գործառնությունների բնույթը և ընդհանուր տեղեկատվություն

«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» Հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ) հիմնադրվել է հիմնադիր՝ Տեխասի գյուղատնտեսական փորձարկումների կայանի որոշման համաձայն և գործում է՝ համաձայն ՀՀ Սահմանադրության, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի, «Հիմնադրամների մասին» ՀՀ օրենքի և այլ իրավական ակտերի: Հիմնադրամը գրանցվել է ՀՀ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կենտրոնական մարմնի կողմից 2005թ. փետրվարի 24-ին:

Հիմնադրամը շահույթ չհետապնդող կազմակերպություն է, որը հետապնդում է բարեգործական, սոցիալական, գիտական, կրթական, բնապահպանական նպատակներ և իր գործունեությունը սկսել է 2005թ. հունիսից:

Հիմնադրամն իր նպատակներին համապատասխան կարող է իրականացնել՝

- Գյուղատնտեսական, սոցիալական, գիտական, կրթական և այլ ոլորտներում բարեգործական, աջակցության, զարգացման և ուսուցման ծրագրեր
- Հետևյալ ձեռնարկատիրական գործունեության տեսակները.
  - ✓ Հետազոտություններ ու մշակումներ բնական, հասարակական և հումանիտար գիտությունների բնագավառներում
  - ✓ Շուկայի կոնյուկտուրայի և հասարակական կարծիքի բացահայտման հետազոտություններ
  - ✓ Խորհրդատվություն գործունեության կառավարման հարցերով
  - ✓ Դասընթացների կազմակերպում

2019 թվականին Հիմնադրամի իրականացրած հիմնական ծրագրերը՝ Միավորված Ազգերի Կազմակերպության զարգացման (UNDP), Միավորված Ազգերի Պարենի և Գյուղատնտեսության Կազմակերպության (FAO), Համաշխարհային Բանկի (World Bank), Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության Հայաստանյան գրասենյակի (GIZ), ԱՄՆ ՄԶԳ-ի (USAID) աջակցությամբ ու ֆինանսավորմամբ իրականացված ծրագրերն են, որոնք բաղկացած են հետևյալ ենթածրագրերից.

- Ագրոբիզնեսի կրթության զարգացման նախաձեռնություն
- Ագրոբիզնեսի ուսուցման կենտրոնի ծրագիր
- Կաթնամթերքի մշակման բարելավումը Հայաստանի Հանրապետությունում
- Սիրիահայերի համար գինեգործության և գինու բիզնեսի դասընթացների կազմակերպում
- Բարձրորակ հեղուկ խրոմատոգրաֆի կիրառմամբ նոր լաբորատորիայի և խորհրդատվական ծառայությունների իրականացում
- Աշխարհատեղեկատվական համակարգերի և հեռահար զոնդավորման դասընթաց
- Հայաստանյան հողերի կարգավիճակի և մակերեսի հետազոտության իրականացում
- Արտահանմանն ուղղված օտարերկրյա ուղղակի ներդրումների վերլուծություն
- Հարակայուն ձկնաբուծարաններ հանուն Հայաստանում ջրային ռեսուրսների բարելավման

Հիմնադրամի Անվանումը՝	«Ագրոբիզնեսի հետազոտությունների և կրթության միջազգային կենտրոն» Հիմնադրամ
Գրանցման համարը՝	222.160.00460
Գրանցման վկայականը՝	03Ա 066337
Գրանցման ամսաթիվը՝	24.02.2005թ.
Գտնվելու վայրը (և իրավաբանական հասցեն)՝	ք. Երևան, Տերյան 74
Հարկ վճարողի հաշվառման համարը՝	02577018

Հիմնադրամի կառավարման մարմիններն են.

- Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդը (Խորհուրդ)
- Հիմնադրամի տնօրենը

Խորհուրդը բաղկացած է 3 անդամից, որի կազմը հետևյալն է.

- Ջոն Նիքըլս - Հոգաբարձուների խորհրդի նախագահ
- Արմեն Ասատրյան - Հոգաբարձուների խորհրդի անդամ
- Ալեքսան Շանոյան - Հոգաբարձուների խորհրդի անդամ

2018թ. սեպտեմբերից Հիմնադրամի տնօրենն է Արթուր Գրիգորյանը, իսկ մինչև այդ՝ Վարդան Ուռուտյանը:

31 դեկտեմբերի 2019թ. դրությամբ աշխատակիցների ցուցակային թվաքանակը եղել է 13 հոգի (31 դեկտեմբերի 2018թ.՝ 13 հոգի):

2. Պատրաստման հիմքերը և ստորագրումը

2.1. Հայտարարություն համապատասխանության մասին

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտներին («ՖՀՄՍ») համապատասխան:

2.2. Չափման հիմունքը

Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են չափման սկզբնական արժեքի հիմունքով, բացառությամբ ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների: Ֆինանսական ակտիվները և ֆինանսական պարտավորությունները սկզբնապես չափվում են իրական արժեքի հիմունքով, իսկ «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» կամ «վաճառքի համար մատչելի» կատեգորիաներում դասակարգվածները՝ սկզբնական ճանաչումից հետո ևս չափվում են իրական արժեքի հիմունքով:

Իրական արժեքը սահմանվում է որպես գին, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ:

ՖՀՄՍ 13-ը սահմանում է իրական արժեքների որոշման հիերարխիա, որն արտացոլում է իրական արժեքը ստանալու տարբեր եղանակների հարաբերական արժանահավատությունը.

(ա) Ակտիվ շուկա. գնանշվող գին (1-ին մակարդակ)

Դիտարկել ակտիվ շուկաներում նույնական ֆինանսական գործիքների համար գնանշվող գները:

(բ) Գնահատման մեթոդիկա դիտելի ելակետային տվյալների օգտագործմամբ (2-րդ մակարդակ)

Դիտարկել ակտիվ շուկաներում համանման ֆինանսական գործիքների համար գնանշվող գները կամ ոչ ակտիվ շուկաներում նույնական կամ համանման գործիքների համար գնանշվող գները, կամ օգտագործել գնահատման մեթոդներ, որտեղ բոլոր նշանակալի ելակետային տվյալները դիտելի են:

(գ) Գնահատման մեթոդիկա էական ոչ դիտելի ելակետային տվյալների օգտագործմամբ (3-րդ մակարդակ)

Օգտագործվում են գնահատման մեթոդներ, որոնցում օգտագործվող մեկ կամ ավելի էական ելակետային տվյալներ դիտելի չեն:

2.3. Ներկայացման և ֆունկցիոնալ արժույթը

ՀՀ ազգային արժույթը ՀՀ դրամն է, որը Հիմնադրամի ֆունկցիոնալ և ներկայացման արժույթն է: Ներկայացված ամբողջ ֆինանսական տեղեկատվությունը կլորացված է մինչև մոտակա հազար դրամը:

2.4. Ստորագրումը

Սույն ֆինանսական հաշվետվությունները հաստատվել են 2020թ. հունիսի 15-ին Հիմնադրամի տնօրեն Արթուր Գրիգորյանի և գլխավոր հաշվապահ Հայկ Բալանյանի կողմից:

3. Հաշվապահական հաշվառման քաղաքականություն

3.1. Շնորհներ և նվիրատվություններ

Պետական շնորհները Հիմնադրամին ռեսուրսների փոխանցման տեսքով պետության (պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու միջազգային կազմակերպությունների) կողմից տրամադրվող օգնություն են՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի պայմաններին անցյալում կամ ապագայում համապատասխանության դիմաց: Այլ՝ մասնավոր, ոչ պետական հաստատություններից, բարեգործական կազմակերպություններից ստացված շնորհները համանմանության սկզբունքով հաշվառվում են ինչպես պետական շնորհները: Սակայն, եթե ստացված միջոցներին (ռեսուրսներին) կից՝ Հիմնադրամի գործառնական գործունեությանը վերաբերող որոշակի, կոնկրետ պայմաններ առկա չեն (օրինակ՝ տրամադրվել են Հիմնադրամի ընդհանուր գործառնական, կանոնադրական նպատակներով օգտագործվելու համար), ապա միջոցների այդպիսի ստացումը չի դիտվում որպե ս շնորհ, այլ դիտվում է որպես նվիրաբերություն կամ նվիրատվություն՝ կախված այլ համապատասխան հանգամանքներից:

Շնորհները չեն ճանաչվում, քանի դեռ չկա հիմնավորված երաշխիք, որ Հիմնադրամը կատարելու է դրանց կից բոլոր պայմանները, և որ շնորհները ստացվելու են:

i. Ակտիվներին վերաբերող շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհները նրանք են, որոնց հիմնական պայմանն այն է, որ Հիմնադրամը գնի, կառուցի կամ այլ կերպ ձեռք բերի ոչ ընթացիկ ակտիվներ: Դրանք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես հետաձգված եկամուտ ոչ ընթացիկ պարտավորությունների կազմում և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում:

Ոչ դրամային ակտիվի ձևով ստացված շնորհները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչվում են անվանական արժեքով, իսկ նման արժեքի բացակայության դեպքում՝ գնահատված իրական արժեքով և սիստեմատիկ հիմունքով ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ համապատասխան ակտիվի օգտակար ծառայության ժամկետի ընթացքում կամ այդ ակտիվի սպառումից առաջացող օգուտներին զուգընթաց:

ii. Եկամուտներին վերաբերող շնորհներ

Շնորհները, որոնք չեն դասակարգվում որպես ակտիվներին վերաբերող, համարվում են եկամուտներին վերաբերող: Դրանք ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում են որպես հետաձգված եկամուտ ընթացիկ պարտավորությունների կազմում և ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ որպես այլ եկամուտ՝ սիստեմատիկ հիմունքով այն ժամանակաշրջանների ընթացքում, երբ Հիմնադրամը որպես ծախս է ճանաչում դրանց գծով համապատասխան ծախսումները:

iii. Նվիրատվություններ

Նվիրատվությունները և առանց կոնկրետ պայմանների տրված նվիրաբերությունները որպես եկամուտ են ճանաչվում դրանց ստացման պահին:

3.2. Շահութահարկ

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար շահութահարկի գծով ընթացիկ հարկերը, դրանց չվճարված մասի չափով, ճանաչվում են որպես պարտավորություն: Եթե ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար արդեն վճարված գումարը գերազանցում է այդ ժամանակաշրջանների

համար վճարման ենթակա գումարը, ապա գերազանցող մասը ճանաչվում է որպես ակտիվ:

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանների համար ընթացիկ հարկային պարտավորությունները (ակտիվները) չափվում են այն գումարով, որն ակնկալվում է, որ կվճարվի բյուջե (կփոխհատուցվի բյուջեից)՝ կիրառելով հարկերի դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային պարտավորությունը ճանաչվում է բոլոր հարկվող ժամանակավոր տարբերությունների համար, բացառությամբ այն հետաձգված հարկային պարտավորությունների, որոնք առաջանում են գուդվիլի սկզբնական ճանաչումից և ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից՝ այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է բոլոր նվազեցվող ժամանակավոր տարբերությունների համար այն չափով, որքանով որ հավանական է հարկվող շահույթի ստացում, որի դիմաց կարող է օգտագործվել նվազեցվող ժամանակավոր տարբերությունը, բացառությամբ այն հետաձգված հարկային ակտիվների, որոնք առաջանում են ակտիվի կամ պարտավորության սկզբնական ճանաչումից այնպիսի գործարքի ներքո, որը ձեռնարկատիրական գործունեության միավորում չէ և այդ գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի, ոչ էլ հարկվող շահույթի (հարկային վնասի) վրա:

Առաջիկա ժամանակաշրջաններ փոխանցված չօգտագործված հարկային վնասների և չօգտագործված հարկային զեղչերի համար ճանաչվում է հետաձգված հարկային ակտիվ այն չափով, որ չափով հավանական է, որ Հիմնադրամն ապագայում կունենա հարկվող շահույթ, որի դիմաց կարող են օգտագործվել այդ չօգտագործված հարկային վնասները և չօգտագործված հարկային զեղչերը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են հարկերի այն դրույքների օգտագործմամբ, որոնք ակնկալվում է, որ կիրառման մեջ կլինեն ակտիվի իրացման կամ պարտավորության մարման ժամանակ՝ հիմք ընդունելով հարկերի այն դրույքները (և հարկային օրենքները), որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ էության, ուժի մեջ են եղել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

Հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ստուգվում (վերանայվում) է: Հիմնադրամը նվազեցնում է հետաձգված հարկային ակտիվի հաշվեկշռային արժեքն այն չափով, որքանով որ այլևս հավանական չէ, որ կստանա բավարար հարկվող շահույթ, որը թույլ կտա հետաձգված հարկային ակտիվից օգուտն ամբողջությամբ կամ մասամբ իրացնել: Ցանկացած այդպիսի նվազեցում պետք է վերականգնվի այն չափով, որքանով որ հավանական է դառնում բավարար հարկվող շահույթի ստացումը:

Հիմնադրամն ընթացիկ հարկային ակտիվները և ընթացիկ հարկային պարտավորությունները հաշվանցում է այն և միայն այն դեպքում, եթե՝

ա) ունի ճանաչված գումարները հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք,

բ) մտադիր է՝ կա՛մ հաշվարկն իրականացնել (ակտիվը կամ պարտավորությունը մարել) զուտ հիմունքով, կա՛մ իրացնել ակտիվը և մարել պարտավորությունը միաժամանակ:

Հիմնադրամի եկամուտների գերակշիռ մասն անհատույց ստացված ակտիվներ են, որոնք շահութահարկով հարկվող չեն, իսկ դրանց հաշվին կամ գծով կատարված ծախսերը նվազեցման ենթակա չեն: Այդ և այլ նկատառումներով ընթացիկ և նախորդ տարիներին Հիմնադրամի կողմից հետաձգված հարկեր չեն ճանաչվել:

3.3. <u>Հիմնական միջոցներ</u>

Հիմնական միջոցի միավորի սկզբնական արժեքը ճանաչվում է որպես ակտիվ այն և միայն այն դեպքում, երբ հավանական է, որ այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի Հիմնադրամ, և միավորի սկզբնական արժեքը կարող է արժանահավատորեն չափվել:

Հիմնական միջոցի միավորը որպես ակտիվ ճանաչելուց հետո հաշվառվում է իր սկզբնական արժեքով (ինքնարժեքով)՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները: Սկզբնական արժեքը ներառում է գնման գինը, ներառյալ՝ ներկրման տուրքերը և չփոխհատուցվող հարկերը, հանած առևտրային զեղչերը և արտոնությունները, ակտիվը համապատասխան վայր հասցնելու և ղեկավարության նախանշած նպատակներով օգտագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ ուղղակիորեն կապված ցանկացած ծախսումները: Հիմնական միջոցի միավորի հաշվեկշռային արժեքում ծախսումների ճանաչումը դադարեցվում է, երբ միավորը գտնվում է այն վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է, որպեսզի այն հնարավոր լինի օգտագործել ղեկավարության նախանշած նպատակներով:

Սկզբնական արժեքը ներառում է մասնագիտական վճարները, իսկ որակավորվող ակտիվի դեպքում՝ նաև կապիտալացման ենթակա փոխառության ծախսումները: Այս ակտիվների մաշվածությունը ևս հաշվարկվում է, երբ դրանք դառնում են պատրաստ՝ իրենց նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:

Հիմնական միջոցի միավորի օտարումից կամ դուրսգրումից առաջացած օգուտը կամ վնասը որոշվում է որպես ակտիվի իրացումից զուտ մուտքերի (եթե առկա են) և հաշվեկշռային արժեքի տարբերություն: Հիմնական միջոցի միավորի ապաճանաչումից առաջացող օգուտը կամ կորուստը ներառվում է շահույթում կամ վնասում, երբ միավորն ապաճանաչվում է:

Հիմնական միջոցի առանձին հաշվառվող միավորի բաղկացուցչի փոխարինման ծախսումները, որոնք հաշվառվում են որպես առանձին ակտիվ, ճանաչվում է հաշվեկշռային արժեքում, երբ այդ ծախսումները կատարվում են, և եթե բավարարվում են ճանաչման չափանիշները: Այդ փոխարինված մասերի հաշվեկշռային արժեքն ապաճանաչվում է: Պահպանման և ընթացիկ սպասարկման, վերանորոգման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում կատարվելու ժամանակաշրջանում:

Ժամանակաշրջանի մաշվածության գումարը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով հաշվարկի գծային մեթոդը հիմնական միջոցի գնահատված օգտակար ծառայության ժամկետի ընթացքում: Ակտիվի մաշվածությունը սկսում է հաշվարկվել, երբ այն մատչելի է օգտագործման համար, այսինքն, երբ այն գտնվում է այնպիսի վայրում և վիճակում, որն անհրաժեշտ է ղեկավարության նախանշած նպատակով այն օգտագործելու համար: Ակտիվի մաշվածության հաշվարկումը դադարում է ակտիվի՝ ՖՀՄՍ 5-ի համաձայն որպես վաճառքի համար պահվող դասակարգվելու կամ որպես վաճառքի համար պահվող դասակարգված օտարման խմբում ներառվելու և ակտիվն ապաճանաչելու ամսաթվերից ամենավաղով: Երբ հիմնական միջոցների միավորը բաղկացած է տարբեր օգտակար ծառայության ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, դրանց մաշվածությունը հաշվարկվում է առանձին:

Հիմնական միջոցների գնահատված օգտակար ծառայության ժամկետները ներկայացված են ստորև.

o	Տրանսպորտային միջոցներ	5-7 տարի
o	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	1-8 տարի
o	Մեքենաներ և սարքավորումներ	1-7 տարի
o	Կտավներ	20 տարի
o	Այլ հիմնական միջոցներ	5-10 տարի

3.4. <u>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</u>

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են կանխիկ դրամական միջոցները, բանկերում բացված հաշվարկային հաշիվները, սկզբնապես մինչև երեք ամիս մարման ժամկետով կարճաժամկետ բանկային ավանդները:

3.5. <u>Արտարժութային գործարքներ</u>

Ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս Հիմնադրամի համար գործառնական արժույթից տարբեր այլ արժույթով իրականացված գործարքները գրանցվում են գործարքի օրվա դրությամբ ՀՀ Կենտրոնական բանկի (ՀՀ ԿԲ) կողմից հրապարակված փոխարժեքով: Յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ արտարժույթով դրամային հոդվածները վերահաշվարկվում են՝ կիրառելով

հաշվետու ամսաթվի դրությամբ ՀՀ ԿԲ կողմից հրապարակված փոխարժեքը: Ոչ դրամային հոդվածները, որոնց սկզբնական արժեքը հաշվառվում է արտարժույթով, չեն վերահաշվարկվում:

Արտարժութային գործարքներից, ինչպես նաև արտարժույթով արտահայտված դրամային հոդվածների վերահաշվարկումից առաջացած փոխարժեքային տարբերությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

3.6. Պաշարներ

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած մշակումն ավարտելու գնահատված ծախսումները և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ գնահատված ծախսումները: Պաշարների ինքնարժեքը ներառում է ձեռքբերման, արտադրանքի վերամշակման բոլոր ծախսումները և պաշարները ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված բոլոր այլ ծախսումները: Պաշարների ինքնարժեքը որոշվում է՝ կիրառելով «Առաջինը մուտք՝ առաջինը ելք» (ՖԻՖՈ) բանաձևը:

3.7. Գնորդների հետ պայմանագրերից և այլ հասույթ

Հասույթը ժամանակաշրջանի ընթացքում Հիմնադրամի սովորական գործունեությունից առաջացող եկամուտն է, այսինքն տնտեսական օգուտների ավելացումն է (ակտիվների ներհոսքի կամ աճի կամ պարտավորությունների նվազման տեսքով), որը հանգեցնում է սեփական կապիտալի աճի, բացառությամբ սեփական կապիտալում հիմնադիրների կողմից ներդրումների հետևանքով սեփական կապիտալի աճի: Հասույթ չի համարվում է պետական շնորհներից և նվիրատվություններից ստացված եկամուտը:

Հիմնադրամը ֆինանսական ներդրումներից տոկոսային հասույթը ճանաչում է արդյունքային տոկոսադրույքի մեթոդով՝ ՖՀՄՍ 9-ին համապատասխան:

Գնորդների հետ պայմանագրերից հասույթը Հիմնադրամը ճանաչում է, երբ բավարարվում են կատարողական պարտականությունները: Կատարողական պարտականությունները գնորդի հետ պայմանագրում նախատեսված խոստում են՝ փոխանցելու որոշակի ապրանքներ կամ ծառայություններ գնորդին: Կախված կատարողական պարտականության բնույթից՝ այն կարող է բավարարվել կամ ժամանակ ինչ որ մի պահի, կամ էլ ժամանակի ընթացքում:

Հիմնադրամի սովորական գործունեության հասույթ բերող ուղղությունները, դրանց գծով կատարողական պարտականությունները և հասույթների ճանաչման պահերը նկարագրված են ստորև.

Հասույթ բերող գործունեության ուղղությունը	**Կատարողական պարտականությունը (ԿՊ)**	**ԿՊ-ի բավարարման ուղղությամբ առաջընթացի չափման մեթոդը**	**Հասույթի ճանաչման պահը**
Հետազոտությունների և մշակումների իրականացում գնորդների պատվերով	Պայմանավորված հետազոտության և մշակման արդյունքների տրամադրում գնորդին	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է
Դասընթացների կազմակերպում և իրականացում	Ուսումնական ծրագրերին համապատասխան՝ սահմանված ժամանակացույցով դասընթացների անցկացումը համապատասխան որակավորում ունեցող դասընթացավարների կողմից, ներառյալ ուսումնական նյութերի տրամադրումը, քննությունների անցկացումը, սերտիֆիկացումը	Դասընթացի նախատեսված տևողության ընթացքում ժամանակային համամասնությամբ	1. Սովորաբար՝ Ժամանակի ընթացքում գծային հիմունքով, 2. Առանձին դեպքերում՝ այն ժամանակ, երբ Հիմնադրամն այլևս չունի պարտավորություն վերադարձնելու ստացված հատուցումը և չունի կատարման ենթակա ԿՊ:

Գինու լաբորատոր փորձաքննությունների անցկացում	Պայմանավորված փորձաքննության արդյունքների տրամադրում գնորդին	Բավարարվում է ժամանակի մի պահի	Երբ ԿՊ-ն կատարված է

Այնքանով, որքանով Հիմնադրամի կողմից կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը գերազանցում է գնորդի կողմից վճարված հատուցումը, Հիմնադրամը ճանաչում է «պայմանագրի ծով ակտիվ», իսկ եթե գնորդից ստացված հատուցման գումարն է գերազանցում կատարողականին համապատասխան ճանաչված հասույթը, ապա տարբերությունը ճանաչվում է որպես «պայմանագրի գծով պարտավորություն»: Գնորդից անվերապահ ստացման ենթակա հատուցումը առանձնացվում է պայմանագրի գծով ակտիվից և ներկայացվում է որպես դեբիտորական պարտք:

3.8. <u>Վարձակալություն</u>

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, Հիմնադրամը, որպես վարձակալ, ճանաչում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվ և վարձակալության գծով պարտավորություն, բացառությամբ ստորև նշված դեպքերի.

ա) բոլոր կարճաժամկետ (12 ամիսը չգերազանցող ժամկետով) վարձակալությունների (ներառյալ այն վարձակալությունները, որոնց մնացորդային ժամկետը 2019 թվականի հունվարի 1-ի դրությամբ չի գերազանցում 12 ամիսը) և

բ) բոլոր այն վարձակալությունների, որոնց դեպքում վարձակալության առարկա ակտիվը փոքրարժեք է (այսինքն՝ դրա արժեքը նոր վիճակում չի գերազանցում 3 միլիոն դրամը):

Վերրը «ա» և «բ» ենթակետերում նշված վարձակալությունների գծով վարձակալական վճարները ճանաչվում են ծախս գծային հիմունքով՝ վարձակալության ժամկետի ընթացքում, ինչպես որ նախորդող ժամանակաշրջաններում ճանաչվում էին գործառնական վարձակալությունները:

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ, օգտագործման իրավունքի ձևով ակտիվի սկզբնական արժեքի մեջ ներառվում են՝

ա) վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը, ինչպես նկարագրված է ստորև,

բ) վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ,

գ) վարձակալի կողմից կրած սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումները:

Մեկնարկի ամսաթվին վարձակալության գծով պարտավորությունը չափվում է այդ ամսաթվին դեռևս չվճարված վարձավճարների ներկա արժեքով՝ զեղչված վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքի կիրառմամբ, եթե այդ դրույքը հեշտությամբ որոշելի է: Հակառակ դեպքում՝ կիրառվում է վարձակալի լրացուցիչ փոխառության տոկոսադրույքը: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ ներառվող վարձավճարները բաղկացած են վարձակալության ժամկետի ընթացքում հիմքում ընկած ակտիվի օգտագործման իրավունքի գծով հետևյալ վճարումներից, որոնք մեկնարկի ամսաթվին դեռևս վճարված չեն.

ա) հաստատուն վճարումներ (ներառյալ՝ ըստ էության հաստատուն վճարումներ)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսում,

բ) վարձակալության փոփոխուն վճարումներ, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքից,

գ) գումարները, որոնք ակնկալվում է վճարել վարձակալի կողմից՝ մնացորդային արժեքի երաշխիքի ներքո,

դ) գնման ընտրանքի իրագործման գին, եթե վարձակալը խելամտորեն համոզված է, որ կիրագործի այդ ընտրանքը, և

ե) վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալու-

թյան ժամկետն արտացոլում է վարձակալի՝ վարձակալությունը դադարեցնելու ընտրանքի իրագործումը:

Ճանաչման և չափման նպատակով, մինչև 2019 թվականի հունվարի 1-ը կնքված վարձակալությունները դիտվում են որպես այդ ամսաթվին կնքված և մեկնարկող վարձակալություն՝ մնացորդային ժամկետով:

Սկզբնական ճանաչումից հետո օգտագործման իրավունքի ձևով ակտիվը չափվում է սկզբնական արժեքով՝

ա) հանած՝ կուտակված մաշվածությունը և արժեզրկումից կուտակված կորուստները, և
բ) ճշգրտված՝ վարձակալության գծով պարտավորության ցանկացած վերաչափմամբ (մասնա¬վո-րապես՝ վարձակալության ժամկետի կամ փոփոխուն վարձավճարների վերանայման դեպքում):

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է սեփական հիմնական միջոցների հաշվառմանը համանման կերպով: Ընդ որում, եթե ակնկալվում է, որ վարձակալության հիմքում ընկած ակտիվի սեփականության իրավունքը վարձակալության ժամկետի ավարտին կամ ընթացքում կփոխանցվի Հիմնադրամին, ապա օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկվում է վարձակալության մեկնարկի ամսաթվից մինչև հիմքում ընկած ակտիվի օգտակար ծառայության ավարտը: Հակառակ դեպքում՝ մինչև օգտագործման իրավունքի ձևով ակտիվի օգտակար ծառայության ավարտի ամսաթվից և վարձակալության ժամկետի ավարտի ամսաթվից ամենավաղը:

Մեկնարկի ամսաթվից հետո, վարձակալության գծով պարտավորությունը չափվում է՝

ա) ավելացնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վարձակալության գծով պարտավորության նկատմամբ տոկոսը,
բ) նվազեցնելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վճարված վարձավճարները, և
գ) վերաչափելով հաշվեկշռային արժեքը՝ արտացոլելու համար վերանայումները կամ վարձակալության վերափոխումները:

Յուրաքանչյուր ժամանակաշրջանում վարձակալության գծով պարտավորության նկատմամբ հաշվարկված տոկոսը ճանաչվում է շահույթում կամ վնասում: Վարձակալության գծով պարտավորության չափման մեջ չներառված վարձակալության փոփոխուն վճարումները ճանաչվում են շահույթում կամ վնասում այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ պայմանը:

Հիմնադրամի վարձակալությամբ ստացված ակտիվները դասակարգվել են որպես ցածր արժեք և ծախսագրվել են 2019թ-ի ընթացքում:

3.9. <u>Ֆինանսական գործիքներ</u>

(i) <u>Սկզբնական ճանաչումը և չափումը</u>

Հիմնադրամը ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունն իր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչում է այն և միայն այն դեպքում, երբ այն դառնում է գործիքի պայմանագրային կողմ:

Ֆինանսական ակտիվը կամ ֆինանսական պարտավորությունը սկզբնական ճանաչման պահին չափվում է իրական արժեքով՝ գումարած, այն դեպքում, երբ դա «իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվ կամ ֆինանսական պարտավորություն չէ, գործարքի հետ կապված այն ծախսումները, որոնք ուղղակիորեն վերագրելի են ֆինանսական ակտիվի կամ ֆինանսական պարտավորության ձեռքբերմանը կամ թողարկմանը:

Սկզբնական ճանաչման պահին անտոկոս կամ շուկայականից ցածր տոկոսով տրամադրած կամ ստացած փոխառությունները, երկարաժամկետ դեբիտորական կամ կրեդիտորական պարտքերը չափվում են ոչ թե անվանական արժեքով, ոչ թե այդ պահին տրված կամ ստացված հատուցման չափով,

այլ իրական արժեքով, որը որոշվում է դրանց գծով պայմանագրային ապագա դրամական հոսքերը զեղչելով՝ կիրառելով համապատասխան ժամկետայնության և ռիսկայնության գործիքների համար գերակշռող շուկայական տոկոսադրույքները: Սկզբնական չափման համար որոշված իրական արժեքի և տրված կամ ստացված հատուցման միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում, բացառությամբ, երբ դա պետական շնորհի մաս է կազմում, որի դեպքում կիրառվում են «Պետական շնորհների հաշվառում և պետական օգնության բացահայտում» ՀՀՄՍ 20-ով սահմանված մոտեցումները:

(ii) <u>Ապաճանաչումը</u>

Հիմնադրամն ապաճանաչում է ֆինանսական ակտիվն այն և միայն այն դեպքում, երբ՝

ա) ֆինանսական ակտիվից առաջացող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցնում են իրենց ուժը (լրանում է ուժի մեջ լինելու ժամկետը). կամ

բ) այն փոխանցում է ֆինանսական ակտիվը, և փոխանցումը ստորև շարադրվածին համապատասխան որակվում է որպես ապաճանաչման պայմանները բավարարող:

Ֆինանսական պարտավորությունը (կամ ֆինանսական պարտավորության մի մասը) ապաճանաչվում է այն և միայն այն դեպքում, երբ այն մարվում է, այսինքն, երբ պայմանագրում նշված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում, կամ ուժի մեջ լինելու ժամկետը լրանում է:

Գոյություն ունեցող փոխառուի և փոխատուի միջև նշանակալիորեն տարբերվող պայմաններով պարտքային գործիքների փոխանակումը պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում: Նմանապես, գոյություն ունեցող ֆինանսական պարտավորության կամ դրա մի մասի պայմանների նշանակալի վերափոխումը (անկախ այն բանից, արդյոք այն վերագրելի է փոխառուի ֆինանսական դժվարություններին) պետք է հաշվառվի որպես սկզբնական ֆինանսական պարտավորության մարում և նոր ֆինանսական պարտավորության ճանաչում:

Մարված կամ այլ կողմի փոխանցված ֆինանսական պարտավորության (կամ ֆինանսական պարտավորության մի մասի) հաշվեկշռային արժեքի և վճարված հատուցման (ներառյալ փոխանցված ցանկացած ոչ դրամական ակտիվները կամ ստանձնած պարտավորությունները) միջև տարբերությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

(iii) <u>Հետագա չափումը</u>

Սկզբնական ճանաչումից հետո տրամադրած և ստացած փոխառությունները, ավանդները, դեբիտորական և կրեդիտորական պարտքերը չափվում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունքային տոկոսադրույքի մեթոդը: Կարճաժամկետ դեբիտորական և կրեդիտորական պարտքերը սովորաբար չափվում են անվանական գումարով: Ցպահանջ պարտավորությունները չափվում են այն գումարով, որով ենթակա են մարման պահանջը ներկայացվելու դեպքում:

«Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունների իրական արժեքի փոփոխություններից օգուտը կամ կորուստը ճանաչվում է շահույթում կամ վնասում:

Հիմնադրամն այլ կազմակերպությունների բաժնային գործիքներում (բաժնետոմսերում) ներդրումներ չունի:

(iv) <u>Արժեզրկում</u>

Բոլոր ֆինանսական ակտիվների (բացի «Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող» դասակարգվածներից) և պայմանագրերի գծով ակտիվների համար Հիմնադրամը ճանաչում է ակնկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) պահուստ՝ այդ ակտիվների սկզբնական ճանաչման պահին, ինչպես նաև յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Սկզբնական ճանաչման ժամանակ ԱՊԿ պահուստը չափվում է 12-ամսյա ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային

կորուստների մեծությամբ: Եթե սկզբնական ճանաչումից հետո որևէ ֆինանսական ակտիվի գծով տեղի է ունեցել պարտքային ռիսկի նշանակալի աճ, ապա այդ ֆինանսական ակտիվի գծով ԱՊԿ պահուստը չափվում է մինչև մարումը մնացած ամբողջ ժամանակաշրջանում ակնկալվող պարտքային կորուստների մեծությամբ: ԱՊԿ-ն պարտքային կորուստների՝ հավանականություններով կշռված գնահատականն է: Պարտքային կորուստները չափվում են որպես բոլոր դրամական պակասուրդների (այսինքն՝ գործիքի պայմաններին համապատասխան Հիմնադրամին հասանելիք դրամական հոսքերի և այն դրամական հոսքերի միջև տարբերությունը, որոնք Հիմնադրամն ակնկալում է ստանալ) ներկա արժեք՝ զեղչված ֆինանսական ակտիվի արդյունքային տոկոսադրույքով: ԱՊԿ պահուստը և դրա հետագա փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: ԱՊԿ պահուստը ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացվում է որպես համապատասխան ֆինանսական ակտիվի հաշվեկշռային արժեքի նվազեցում:

3.10. <u>Հիմնական միջոցների և ոչ նյութական ակտիվների արժեզրկում</u>

Անորոշ օգտակար ծառայության ժամկետ ունեցող ակտիվները չեն ամորտիզացվում և յուրաքանչյուր տարի ենթարկվում են արժեզրկման ստուգման: Մաշվող ակտիվները վերանայվում են արժեզրկման համար, երբ իրադարձությունները և հանգամանքների փոփոխությունները վկայում են այն մասին, որ դրանց հաշվեկշռային արժեքը կարող է չվերականգնվել: Արժեզրկման կորուստը ճանաչվում է այն գումարով, որով ակտիվի հաշվեկշռային արժեքը գերազանցում է փոխհատուցվող գումարը:

Փոխհատուցվող գումարն ակտիվի կամ դրամաստեղծ միավորի իրական արժեքից հանած վաճառքի ծախսումները և օգտագործման արժեքից առավելագույնն է: Եթե ակտիվի կամ դրամաստեղծ միավորի փոխհատուցվող գումարն ավելի փոքր է նրա հաշվեկշռային արժեքից, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը՝ ճանաչվելով որպես արժեզրկումից կորուստ շահույթում կամ վնասում:

Երբ հետագայում արժեզրկումից կորուստը հակադարձվում է, ապա ակտիվի կամ դրամաստեղծ միավորի հաշվեկշռային արժեքն ավելացվում է մինչև նրա փոխհատուցվող գումարը, բայց այնպես, որ ակտիվի ավելացված հաշվեկշռային արժեքը չգերազանցի այն հաշվեկշռային արժեքը, որը որոշված կլիներ, եթե նախորդ տարիներին այդ ակտիվի կամ դրամաստեղծ միավորի գծով արժեզրկումից կորուստներ ճանաչված չլինեին: Արժեզրկումից կորստի հակադարձումն անմիջապես ճանաչվում է շահույթում կամ վնասում:

3.11. <u>Պահուստներ</u>

Պահուստը ճանաչվում է, երբ Հիմնադրամն ունի ներկա պարտականություն (իրավական կամ կառուցողական)՝ որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտականությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, և պարտականության գումարը հնարավոր է արժանահավատորեն գնահատել: Եթե ժամանակի մեջ դրամի արժեքի ազդեցությունն էական է, ապա պահուստի գումարն իրենից ներկայացնում է այն ծախսումների ներկա արժեքը, որոնք, ըստ ակնկալության, կպահանջվեն այդ պարտականությունը մարելու համար:

Զեղչման դրույքն այն դրույքն է՝ առանց հաշվի առնելու հարկման ազդեցությունը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի և այդ պարտավորությանը հատուկ ռիսկերի ընթացիկ շուկայական գնահատումները: Զեղչման դրույքը չի արտացոլի այն ռիսկերը, որոնց գծով դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատումներն ճշգրտվել են:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պահուստները վերանայվում են և ճշգրտվում են՝ ընթացիկ լավագույն գնահատականն արտացոլելու համար: Եթե այլևս հավանական չէ, որ պարտավորությունը մարելու համար կպահանջվի տնտեսական օգուտներ մարմնավորող միջոցների արտահոսք, ապա պահուստը հակադարձվում է: Պահուստն օգտագործվում է միայն այն ծախսումների դիմաց, որոնց գծով այդ պահուստը սկզբնապես ճանաչվել էր:

3.12.Աշխատակիցների հատուցումներ

Աշխատակիցների հատուցումները ներառում են՝

a. աշխատավարձը,
b. կարճաժամկետ փոխհատուցելի բացակայությունները, ինչպիսիք են վճարովի տարեկան արձակուրդը և ժամանակավոր անաշխատունակության նպաստը,
c. պարգևավճարները:

Աշխատակիցների հատուցումների այն գումարը, որն ակնկալվում է վճարել հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում աշխատակիցներից ստացված ծառայության դիմաց, ճանաչվում է՝ ա) որպես պարտավորություն (հաշվեգրված ծախս)՝ արդեն վճարված գումարները հանելուց հետո, և բ) որպես ծախս, բացառությամբ, երբ որևէ ստանդարտով պահանջվում կամ թույլատրվում է այդ հատուցումների ներառումը որևէ ակտիվի ինքնարժեքի (սկզբնական արժեքի) մեջ: Եթե արդեն վճարված գումարը գերազանցում է հատուցումների գումարը, ապա Հիմնադրամն այդ գերազանցումը ճանաչում է որպես ակտիվ (կանխավճարված ծախս) այնքանով, որքանով այդ կանխավճարը կհանգեցնի, օրինակ, ապագա վճարումների նվազման կամ դրամական միջոցների վերադարձի:

Հիմնադրամն աշխատակիցների կարճաժամկետ հատուցումների գծով ակնկալվող ծախսումները՝ կուտակվող փոխհատուցելի բացակայությունների ձևով (ինչպիսին է վճարովի ամենամյա արձակուրդը) ճանաչում է, երբ աշխատակիցները մատուցում են ծառայություն, որն ավելացնում է ապագա փոխհատուցելի բացակայությունների նրանց իրավունքը: Կուտակվող փոխհատուցելի բացակայությունների գծով ակնկալվող ծախսումները չափվում են այն լրացուցիչ գումարով, որը Հիմնադրամն ակնկալում է վճարել որպես հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կուտակված չօգտագործված իրավունքների արդյունք:

Հիմնադրամը պարգևավճարների գծով ակնկալվող ծախսումները ճանաչում է, երբ՝ ա) այն ունի այդպիսի վճարումներ կատարելու ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն՝ որպես անցյալ դեպքերի արդյունք և բ) պարտականությունը կարող է արժանահավատորեն գնահատվել: Ներկա պարտականություն գոյություն ունի այն և միայն այն դեպքում, երբ Հիմնադրամը պարտականության կատարումից խուսափելու որևէ իրատեսական հնարավորություն չունի:

4. Գնահատումներ և դատողություններ

ՖՀՄՍ-ներին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Հիմնադրամի ղեկավարությունից կատարել գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդում են հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման, ինչպես նաև հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ ակտիվների, պարտավորությունների և պայմանական պարտավորությունների գումարների վրա և հաշվետու ժամանակաշրջանի եկամուտների ու ծախսերի մեծության վրա: Գնահատումները և դատողությունները շարունակաբար գնահատվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա՝ ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք ողջամիտ են որոշակի հանգամանքներում: Այնուամենայնիվ, այս ենթադրությունների և գնահատականների վերաբերյալ անորոշությունը կարող է բերել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետագայում ակտիվների ու պարտավորությունների հաշվեկշռային արժեքների էական փոփոխություններ:

4.1. Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ

Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը դատողության արդյունք է՝ հիմնված նման ակտիվի հետ կապված փորձի վրա: Ապագա տնտեսական օգուտները մարմնավորվում են ակտիվներում և սպառվում հիմնականում օգտագործմանը զուգընթաց: Այնուամենայնիվ, այնպիսի գործոնները, ինչպիսիք են գործառնական, տեխնիկական կամ առևտրային հնացածությունը (մաշվածությունը), հաճախ հանգեցնում են ակտիվի տնտեսական օգուտների նվազեցման: Ղեկավարությունը մնա-

ցորդային օգտակար ծառայության ժամկետը գնահատում է ակտիվի ընթացիկ տեխնիկական վիճակին համապատասխան և ըստ այն գնահատված ժամանակաշրջանի, որի ընթացքում Հիմնադրամը կանխատեսում է ստանալ օգուտներ: Հաշվի են առնված հետևյալ հիմնական գործոնները. ակտիվների կանխատեսվող օգտագործումը, գործառնական գործոններից և պահպանման ծրագրից կախված՝ մաշվածությունը և շուկայական պայմանների փոփոխություններից առաջացող տեխնիկական և առևտրային մաշվածությունը:

4.2. <u>Ակտիվների արժեզրկումը</u>

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի համար Հիմնադրամը գնահատում է ակտիվների փոխհատուցվող գումարի՝ հաշվեկշռային արժեքից հնարավոր նվազման հայտանիշները: Փոխհատուցվող գումարն իրենից ներկայացնում է օգտագործման արժեքից և «իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսեր»-ից առավելագույնը: Եթե փոխհատուցվող գումարը փոքր է հաշվեկշռային արժեքից, ապա վերջինս տարբերության չափով պետք է նվազեցվի՝ որպես արժեզրկումից կորուստ: Արժեզրկումից կորուստ ճանաչվում է շահույթում կամ վնասում այն ժամանակահատվածում, որում նվազումը կատարվել է:

Ներկայումս գոյություն չունեցող անցյալ պայմանների ազդեցությունը վերացնելու և անցյալում գոյություն չունեցող, բայց ներկայումս առկա պայմանների ազդեցությունն արտացոլելու նպատակով անցյալ փորձը ճշգրտվում է ընթացիկ դիտելի և ապագային միտված տվյալների հիման վրա:

4.3. <u>Հարկային օրենսդրություն</u>

Հայաստանի Հանրապետությունում հարկային օրենսդրության համապատասխանությունը մեկնաբանությունների առարկա է հանդիսանում, որոնք կատարվում են հարկային մարմինների կողմից: Հիմնադրամի անորոշ հարկային վիճակը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում վերագնահատվում է ղեկավարության կողմից: Շահութահարկի գծով պարտավորությունները որոշվում են ղեկավարության կողմից այն չափով, որ չառաջանան հարկային մարմինների կողմից լրացուցիչ պահանջներ հարկերի գծով:

Գնահատականները հիմնված են հարկային օրենսդրության մեկնաբանությունների և ցանկացած հայտնի դատարանի կամ այդ հարցերի գծով իրավասու մարմնի որոշման վրա, որոնք ընդունվել են կամ էականորեն ընդունվել են մինչև հաշվետու ժամանակաշրջանը: Տուգանքների, հարկերի (բացի շահութահարկից) գծով պարտավորությունները ճանաչվում են հաշվետու ժամանակաշրջանում՝ պարտավորությունը լուծելու համար անհրաժեշտ ծախսումների գծով ղեկավարության լավագույն գնահատականի հիման վրա:

4.4. <u>Կապակցված կողմերի հետ գործարքներ</u>

Իր սովորական գործունեության ընթացքում Հիմնադրամն իրականացնում է գործարքներ կապակցված կողմերի հետ: Հիմնադրամը կիրառում է մասնագիտական դատողություն կապակցված կողմերի բացահայտման ուղղությամբ: Գնահատումն իրականացնելու համար Հիմնադրամը պարբերաբար հետևում է հոգաբարձուների խորհրդի անդամների նշանակալի մասնակցությանն այլ կազմակերպությունների կապիտալում, ինչպես նաև վերլուծում է յուրաքանչյուրի հետ գործարքի ծավալները:

5. Նոր կամ փոփոխված ՖՀՄՍ-ներ

5.1. <u>Նոր կամ փոփոխված ստանդարտների և մեկնաբանությունների կիրառում</u>

Ստորև նկարագրված են երկու նոր ստանդարտներ, որոնք ուժի մեջ են մտել և Հիմնադրամի կողմից կիրառվել են 2019 թ. հունվարի 1-ից: Նույն ամսաթվից ուժի մեջ են մտել նաև այլ ստանդարտների փոփոխություններ, որոնք կամ կիրառելի չեն եղել, կամ ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի վրա:

– *«Վարձակալություն» ՖՀՄՍ 16* (հրապարակվել է 2016թ. հունվարին) պարտադիր կիրառման ենթակա է դարձել 2019թ. հունվարի 1-ից: Ստանդարտը սահմանում է սկզբունքներ վարձակալությունների ճանաչման, չափման, բացահայտման և ներկայացման համար: Ի թիվս այլ նոր

պահանջների, ստանդարտը պահանջում է, որ բոլոր վարձակալությունները (որոշակի փոքր բացառություններով) ճանաչվեն վարձակալի ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Ստանդարտը փոխարինում է հետևյալ ստանդարտներին ու մեկնաբանություններին.

- «Վարձակալություն» ՀՀՄՍ 17,
- «Համաձայնություններում վարձակալության առկայության որոշում» ՖՀՄՍՄԿ 4,
- «Գործառնական վարձակալություն. խրախուսող պայմաններ» ՄՄԿ 15,
- «Վարձակալության իրավական ձև ներառող գործարքների բովանդակության գնահատումը» ՄՄԿ 27:

Հիմնադրամի գնահատմամբ այս ստանդարտների կիրառումն ազդեցություն չի ունենա իր ֆինանսական հաշվետվությունների վրա առաջին անգամ կիրառման ժամանակաշրջանում, քանի որ որևէ նշանակալի վարձակալությունն որպես վարձակալ Հիմնադրամը չունի:

– *«ՖՀՄՍ-ների տարեկան բարելավումներ. 2015-2018թթ. ցիկլ»* (հրապարակվել է 2018թ. դեկտեմբերին) պարտադիր կիրառման ենթակա է 2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Փոփոխություններ են կատարվել հետևյալ ստանդարտներում.

- «Բիզնեսի միավորումներ» ՖՀՄՍ 3,
- «Համատեղ պայմանավորվածություններ» ՖՀՄՍ 11,
- «Շահութահարկեր» ՀՀՄՍ 12,
- «Փոխառության ծախսումներ» ՀՀՄՍ 23:

Այս փոփոխություններն էական ազդեցություն չեն ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

– *«Շահութահարկի հաշվառման մոտեցման անորոշություն» ՖՀՄՍՄԿ 23 Մեկնաբանություն* (հրապարակվել է 2018թ. հունիսին) պարտադիր կիրառման ենթակա է դարձել 2019թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար: Վաղաժամ կիրառումը թույլատրելի է: Մեկնաբանությամբ հստակեցվում է, թե ինչպես պետք է կիրառվեն «Շահութահարկեր» ՀՀՄՍ 12-ի ճանաչման և չափման կանոնները, երբ առկա է անորոշություն շահութահարկի գծով մոտեցումների նկատմամբ:

Այս մեկնաբանությունն ազդեցություն չի ունեցել Հիմնադրամի ֆինանսական հաշվետվությունների վրա:

5.2. <u>Հրապարակված, բայց դեռ ուժի մեջ չմտած ստանդարտներ</u>

Հրապարակված, սակայն սույն ֆինանսական հաշվետվություններով ծածկվող հաշվետու ժամանակաշրջանի համար դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտները բերված են ստորև: Այս ցանկն այն հրապարակված ստանդարտների և մեկնաբանությունների ցանկն է, որոնք Հիմնադրամի կանխատեսումներով կօգտագործվեն իր կողմից հետագայում: Հիմնադրամը մտադիր է ընդունել դրանք այն ժամանակ, երբ այդ ստանդարտներն ուժի մեջ կմտնեն:

o *ՀՀՄՍ 1 «Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում» և ՀՀՄՍ 8 «Հաշվապահական հաշվառման քաղաքականություն, փոփոխություններ հաշվապահական հաշվառման գնահատումներում և սխալներ»* - Փոփոխությունները միտված են ՀՀՄՍ 1 -ի բովանդակությունը առավել դյուրըմբռնելի դարձնելուն և չեն փոփոխում ՖՀՄՍ-ներում էականության բնորոշումը:

Օգտագործողների վրա ազդող էականության սահմանը «կարող է ազդել» արտահայտությունը վերածվել է «կարող է խելամտորեն ակնկալվել, որ կազդի» արտահայտությամբ: Էականության սահմանումը ՀՀՄՍ 8-ում փոխարինվել է ՀՀՄՍ 1-ում ներկայացված էականությամբ:

Փոփոխությունները կիրառելի են 2020թ հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետվությունների համար: Թույլատրելի է վաղաժամ կիրառումը:

6. Հիմնական միջոցներ

Հազար դրամ	Շենքեր և կառուցվածքներ	Մեքենաներ և սարքավորումներ	Արտադրական գույք, տնտեսական գույք, գործիքներ	Տրանսպ տային միջոցնե
Արժեք				
Մնացորդ առ 01.01.2018թ.	**-**	**82,218**	**43,949**	**27**
Ավելացում	-	25,538	9,619	
Մնացորդ առ 31.12.2018թ.	**-**	**107,756**	**53,568**	**27**
Ավելացում	90,478	15,348	3,570	
Դուրս գրում	-	(5,078)	(10,185)	(8
Մնացորդ առ 31.12.2019թ.	**90,478**	**118,026**	**46,953**	**18**
Մաշվածություն				
Մնացորդ առ 01.01.2018թ.	**-**	**56,881**	**36,840**	**27**
Տարվա մաշվածություն	-	7,238	1,944	
Մնացորդ առ 31.12.2018թ.	**-**	**64,119**	**38,784**	**27**
Տարվա մաշվածություն	63	11,962	3,025	
Դուրս գրում	-	(5,078)	(10,185)	(8
Մնացորդ առ 31.12.2019թ.	**63**	**71,003**	**31,625**	**18**
Հաշվեկշռային արժեք				
Առ 01.01.2018թ	**-**	**25,337**	**7,109**	
Առ 31.12.2018թ.	**-**	**43,637**	**14,784**	
Առ 31.12.2019թ.	**90,415**	**47,023**	**15,329**	

31.12.2019թ. դրությամբ Հիմնադրամը չունի հիմնական միջոցների ձեռքբերման որևէ պայմանագրային հանձնառություն (31

2019թ. ընթացքում Հիմնադրամը չի հայտնաբերել իր հիմնական միջոցների արժեզրկում: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրութ (2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ 1,387 անուն 99,124 հազար դրամ) համախառն հաշվեկշռային արժեքով հիմնակա հաշվեկշռային արժեքով: 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված հիմնական միջոցներ:

7. Այլ ոչ ընթացիկ ակտիվներ

31.12.2019թ դրությամբ այս հոդվածում ներկայացված են Հիմնադրամի կողմից օգտագործման իրավունքով ստացված տարածքների վրա կատարված կապիտալ ծախսումները, որոնք ամորտիզացվում են 5 տարի ժամկետով, ինչպես նաև ոչ նյութական ակտիվներ՝ 113 հազ. ՀՀ դրամ արժեքով (31.12.2018թ. զրո):

8. Պաշարներ

Հաշվետու ժամանակաշրջանի վերջին պաշարների կազմում 1,886 հազ. դրամը իրենից ներկայացնում է անավարտ արտադրություն գինենյութի տեսքով, իսկ մնացածը՝ շնորհային ծրագրերի իրականացման նպատակով ձեռքբերված, սական դեռևս չբաշխված (չօգտագործված) ապրանքների մնացորդն է:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Հիմնադրամը չունի գրավադրված պաշարներ: Պաշարների սեփականության իրավունքի այլ սահմանափակումներ չկան:

2019թ. ընթացքում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմում է 27,793 հազար դրամ (2018թ.՝ 11,957 հազար դրամ): Պաշարները ներկայացվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով:

Հաշվետու տարվա ընթացքում պաշարների արժեքի նվազում տեղի չի ունեցել:

9. Դեբիտորական պարտքեր և կանխավճարներ

Հազար դրամ	Առ 31.12.2019թ.	Առ 31.12.2018թ
Մատուցված ծառայությունների գծով դեբիտորական պարտքեր և ավարտվածության աստիճանով որոշված ակտիվներ	1,328	884
Հետաձգված ծախսեր տրված ենթաշնորհների գծով	227	228
Տրված կանխավճարներ	7,357	274
Դեբիտորական պարտքեր ստացվելիք շնորհների գծով	22,860	15,185
Հարկերի գծով տրված կանխավճարներ	432	1,145
Այլ դեբիտորական պարտքեր	1,524	315
	33,728	**18,031**

Դեբիտորական պարտքերի հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Հիմնադրամի ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 17-ում:

10. Դրամական միջոցներ և ոչ դրամային հոդվածներ

10.1. Դրամական միջոցներ

Հազար դրամ	Առ 31.12.2019թ.	Առ 31.12.2018թ.
Բանկային հաշիվներ՝ ՀՀ դրամով	36,354	27,406
Բանկային հաշիվներ՝ արտարժույթով	289,981	97,534
Դրամարկղ՝ ՀՀ դրամով	1,352	154
	327,687	**125,094**

Նշված ամսաթվերի դրությամբ դրամական միջոցների օգտագործման որևէ սահմանափակում չկա:

Դրամական միջոցների հետ կապված պարտքային և արժութային ռիսկերին Հիմնադրամի ենթարկվածությունը բացահայտված է Ծանոթ. 17-ում:

10.2. Ոչ դրամային գործարքներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Ոչ դրամային գործարքներ՝ կապված ներդրումային գործունեության հետ		
Հիմնական միջոցների՝ որպես շնորհ ստացում	553	30,089
	553	**30,089**

11. Շնորհներ

Ակտիվներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**45,111**	**23,086**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	6,049	30,089
Տարվա ընթացքում շահույթում կամ վնասում որպես եկամուտ ճանաչված	(9,442)	(8,064)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**41,718**	**45,111**

Եկամուտներին վերաբերող շնորհներ

Հազար դրամ	2019թ.	2018թ.
Մնացորդը հունվարի 1-ին	**35,222**	**77,010**
Տարվա ընթացքում ստացված շնորհներ	457,813	103,794
Վերադասակրգում որպես մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացված կանխավճար՝ «պայմանագրի գծով պարտավորություն»	(7,544)	-
Նախորդ տարվա ստացման ենթակա շնորհի ստացում	(15,185)	-
Ստացման ենթակա շնորհներ	22,145	15,185
Տարվա ընթացքում շահույթում կամ վնասում որպես եկամուտ ճանաչված	(263,606)	(160,767)
Մնացորդը դեկտեմբերի 31-ին	**228,845**	**35,222**

2019թ. Հիմնադրամը շնորհի պայմանագիր է ստորագրել Ավստրիայի Զարգացման Գործակալության հետ՝ Հայաստանում մրգի արտադրության ոլորտի զարգացման ծրագրի իրականացման շրջանակում: 2019 թ. վերջի դրությամբ հետաձգված եկամտի վերը նշված մնացորդից շուրջ 186 մլն դրամը վերաբերում է նշված պայմանագրի շրջանակում ստացված դրամաշնորհին: Համաձայն պայմանագրի՝ ծրագրի տևողությունը 2019թ. դեկտեմբերի 1-ից 2023թ. նոյեմբերի 30-ն է: Առաջին հաշվետու տարին ավարտվում է 2020թ-ի նոյեմբերի 30-ին: Շնորհի գումարի մասնակի ստացումը տեղի է ունեցել 2019թ.-ի դեկտեմբերի 12-ին, սակայն ծրագրով նախատեսված աշխատանքներ հաշվետու տարվա վերջի դրությամբ դեռ չեն իրականացվել:

12. Այլ պարտավորություններ

Հազար դրամ	31.12.2019թ.	31.12.2018թ.
Հարկերի գծով, բացի շահութահարկից	7,845	-
Գնումների գծով	3,240	-
Հաշվեգրած պարտավորություններ չօգտագործած արձակուրդայինների գծով	2,397	3,064
Այլ	382	103
Ընդամենը	**13,864**	**3,167**

13. Հասույթ

Գործընկերոջ անվանում	Ծրագրի անվանում	2019թ.	2018թ.
Միջազգային ֆինանսական կորպորացիայի հայաստանյան ներկայացուցչություն	Վայրի հավաքի ոլորտի գնահատում և ուսուցման ծրագրի մշակում	-	11,467

Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (ԳՄՀԸ) հայաստանյան գրասենյակ	Աջակցություն սիրիահայ ուսանողներին «Գինեգործություն և գինու բիզնես» կրթական ծրագրին	-	3,060
	Սիրիրահայերի և տեղաբնակ հայերի համար գինեգործության դասընթացի կազմակերպում (WINMASTER)	4,329	-
	Աշխարհատեղեկատվական համակարգերի և հեռահար զոնդավորման դասընթաց	7,544	-
Տարբեր իրավաբանական և ֆիզիկական անձինք	Դասընթացների կազմակերպում	7,531	2,284
Տարբեր իրավաբանական և ֆիզիկական անձինք	Գինու լաբորատոր փորձաքննությունների անցկացում	5,917	4,996
Ընդամենը		**25,321**	**21,808**

14. Նվիրաբերությունից եկամուտ

Այս հոդվածում ներառված են ՀՀ և օտարերկրյա առանձին քաղաքացիներից և կազմակերպություններից առանց որևէ կոնկրետ պայմանի ստացված գումարները՝ կանոնադրական գործունեության շրջանակներում օգտագործելու նպատակով:

15. Շահութահարկի գծով ծախս

Հազար դրամ	**2019թ.**	**2018թ.**
Ընթացիկ հարկ	1,328	980
Հետաձգված հարկ	-	-
Ընդամենը	**1,328**	**980**

Հարկի փաստացի (արդյունքային) դրույքաչափի համադրումը ներկայացված է ստորև.

Հազար դրամ	**2019թ.**	**Հարկի դրույքաչափ (%)**	**2018թ.**	**Հարկի դրույքաչափ (%)**
Շահույթ (վնաս) մինչև հարկումը (համաձայն ՖՀՄՍ)	**109,310**		**(59,796)**	
Շահութահարկ՝ 20% դրույքաչափով	21,862	20.0	(11,959)	20.0
Չնվազեցվող ծախսերի (չհարկվող եկամուտների) ազդեցությունը (զուտ)՝ հիմնականում կապված անհատույց ստացված ակտիվների և դրանց հաշվին կատարված ծախսերի հետ	(20,534)	(19.0)	12,939	(21.6)
Շահութահարկի գծով ծախս	**1,328**	**1.0**	**980**	**(1.6)**

16. Կապակցված կողմերի հետ գործարքներ

16.1. Վերահսկողության փոխհարաբերություն

Հիմնադրամը որևէ կազմակերպության կողմից չի վերահսկվում: Հիմնադրամի ղեկավարման բարձրագույն մարմինը հոգաբարձուների խորհուրդն է, որի կազմը ներկայացված է Ծանոթ. 1-ում:

16.2. Առանցքային անձնակազմի հատուցումներ

Հիմնադրամի առանցքային անձնակազմի գծով հատուցումները հետևյալն են.

Հազար դրամ	**2019թ.**	**2018թ.**
Աշխատակիցների կարճաժամկետ հատուցումներ	8,114	27,010

16.3. Կապակցված կողմերի հետ այլ գործարքներ

Հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի անդամների հետ՝	**2019թ.**	**2018թ.**
Փորձագիտական ծառայությունների ստացում	5,980	5,698
Հիմնադրամի տնօրենի հետ՝		
Փորձագիտական ծառայությունների ստացում	7,873	1,599
Ապրանքների ձեռքբերում	40	138

Հիմնադրամի կապակցված կողմերի նկատմամբ չմարված մնացորդներ առկա չեն:

17. Ֆինանսական ռիսկերի կառավարման ուղղությունները

17.1. Ընդհանուր ակնարկ

Հիմնադրամը ենթարկված է ֆինանսական գործիքների օգտագործումից առաջացող հետևյալ ռիսկերին՝

- պարտքային ռիսկ
- իրացվելիության ռիսկ
- շուկայական ռիսկ:

Սույն ծանոթագրությունում ներկայացվում է տեղեկատվություն՝ վերոնշյալ ռիսկերից յուրաքանչյուրին Հիմնադրամի ենթարկվածության մասին, այդ ռիսկերը չափելու և կառավարելու, ինչպես նաև կապիտալի կառավարման գծով Հիմնադրամի նպատակներն ու քաղաքականությունը: Հավելյալ թվային բացահայտումները ներառված են սույն ֆինանսական հաշվետվությունների տարբեր հատվածներում:

Հիմնադրամի ռիսկերի կառավարման ռազմավարության և ընթացակարգերի սահմանման ու վերահսկման ընդհանուր պատասխանատվությունը կրում է ղեկավարությունը:

Հիմնադրամը վերապատրաստումների, կառավարման ստանդարտների և ընթացակարգերի միջոցով ձգտում է ստեղծել կարգապահական և կառուցողական վերահսկողական միջավայր, որում բոլոր աշխատակիցները կհասկանան իրենց դերն ու պարտականությունները:

17.2. Պարտքային ռիսկ

Պարտքային ռիսկը վերաբերում է այն ռիսկին, որ կողմը՝ իր պայմանագրով սահմանված պարտակա-նությունների չկատարմամբ Հիմնադրամի համար կառաջացնի ֆինանսական կորուստ:

Պարտքային ռիսկին առավելագույն ենթարկվածությունը հաշվետու ամսաթվի դրությամբ եղել է.

	Հաշվեկշռային արժեք	
	31.12.2019թ.	**31.12.2018թ.**
Դեբիտորական պարտքեր (Ծանոթ. 9)	24,188	16,069
Դրամական միջոցներ (Ծանոթ. 10)	326,335	124,940
	350,523	**141,009**

17.3. Իրացվելիության ռիսկ

Իրացվելիության ռիսկն այն ռիսկն է, որ Հիմնադրամը դժվարություններ կունենա այն ֆինանսական պարտավորությունների հետ կապված իր պարտականությունները կատարելիս, որոնք մարվելու են դրամական միջոց կամ այլ ֆինանսական ակտիվ տրամադրելով: Իրացվելիության կառավարման հետ կապված Հիմնադրամի մոտեցումն է. որքան հնարավոր է ունենալ բավարար իրացվելի միջոցներ իր ֆինանսական պարտավորությունները ժամանակին կատարելու համար՝ ինչպես նորմալ, այնպես էլ լարված պայմաններում՝ առանց իր համբավը ռիսկի ենթարկելու և առանց անընդունելի վնասներ կրելու:

Հիմնադրամը կառավարում է իրացվելիության ռիսկը՝ շարունակաբար մոնիթորինգի ենթարկելով կանխատեսված և փաստացի դրամական հոսքերը, ինչպես նաև ֆինանսական ակտիվների և

ֆինանսական պարտավորությունների մարման ժամկետներն իրար համապատասխանեցնելով:

17.4. Շուկայական ռիսկ

Շուկայական ռիսկն այն ռիսկն է, որ շուկայական գների փոփոխությունները, ինչպիսիք են արտարժույթի փոխարժեքները, տոկոսադրույքները, կազդեն Հիմնադրամի շահույթի կամ վնասի և ֆինանսական գործիքների արժեքների վրա: Շուկայական ռիսկի կառավարման նպատակն է շուկայական ռիսկին ենթարկվածությունը պահպանել ընդունելի սահմաններում՝ միաժամանակ օպտիմալացնելով հատույցը:

ա) Արժութային ռիսկ

Հիմնադրամն իրականացնում է արտարժույթով արտահայտված գործարքներ, հետևաբար առաջացնում է արտարժույթի փոխարժեքի տատանումներին ենթարկվածություններ: Արտարժութային ռիսկին ենթարկվածությունները Հիմնադրամը չի կառավարում:

Հիմնադրամի արտարժույթով արտահայտված դրամային ակտիվների և դրամային պարտավորությունների հաշվեկշռային արժեքները հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ հետևյալն են՝ արտահայտված համապատասխան արժույթներով.

Հազար դրամ	**31.12.2019թ.**		**31.12.2018թ.**	
Ֆինանսական ակտիվ (պարտավորություն)	**EUR**	**USD**	**EUR**	**USD**
Դեբիտորական պարտքեր	-	7,257	-	15,185
Դրամական միջոցներ	188,041	101,940	13,423	84,111
Կրեդիտորական պարտքեր	-	-	-	-
Արտարժութային զուտ ենթարկվածություն	**188,041**	**109,197**	**13,423**	**99,296**

Հաշվետու ամսաթվի դրությամբ և հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում միջին փոխարժեքները՝ հիմք ընդունելով յուրաքանչյուր օրվա համար ՀՀ ԿԲ կողմից հրապարակած միջին փոխարժեքները, ներկայացված են ստորև.

	Միջին փոխարժեքներ		**Հաշվետու ամսաթվի փոխարժեք**	
Դրամով	**2019թ.**	**2018թ.**	**31.12.2019թ.**	**31.12.2018թ.**
1 ԱՄՆ Դոլար	480.36	483.02	479.7	483.75
1 Եվրո	537.89	570.56	537.26	553.65

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է շահույթ հարկումից հետո ցուցանիշի զգայունությունը հաշվետու ամսաթվի դրությամբ գործող արտարժույթի փոխարժեքների ուժեղացման դեպքում: Արտարժութային փոխարժեքների թուլացումը կհանգեցնի հակառակ էֆեկտի:

Հազար դրամ	**31.12.2019թ.**		**31.12.2018թ.**	
	Ազդեցությունը		**Ազդեցությունը**	
	Շահույթի վրա	**Սեփական կապիտալի վրա**	**Շահույթի վրա**	**Սեփական կապիտալի վրա**
USD ուժեղացում 10%-ով	10,920	10,920	9,930	9,930
EUR ուժեղացում 10%-ով	18,804	18,804	1,342	1,342

բ) Տոկոսադրույքային ռիսկ

Տոկոսադրույքների փոփոխություններն ազդում են ուղղակիորեն փոխառությունների և փոխատվությունների վրա՝ փոփոխելով դրանց իրական արժեքը (ֆիքսված տոկոսադրույքով գործիք) կամ դրանց ապագա դրամական հոսքերը (փոփոխական տոկոսադրույքով գործիք): Ղեկավարությունը չունի ֆորմալ քաղաքականություն՝ որոշելու, թե Հիմնադրամն ինչքանով պետք է ենթարկված լինի փոփոխական և ինչքանով ֆիքսված դրույքներին: Այնուամենայնիվ, նոր փոխառությունների ձեռքբերման կամ տրամադրման դեպքում ղեկավարությունն օգտագործում է իր դատողությունը, որպեսզի որոշի, թե մինչև

մարումն ընկած ակնկալվող ժամկետում Հիմնադրամի համար որը կլինի առավել նպաստավոր՝ փոփոխական, թե ֆիքսված տոկոսադրույքը:

18. Իրական արժեքի գնահատում

Իրական արժեքների գնահատման նպատակն է ստանալ մոտավոր այն գումարը, որը կստացվի շուկայի մասնակիցների միջև սովորական գործարքում ակտիվի վաճառքից կամ կվճարվի պարտավորությունների փոխանցման դիմաց չափման ամսաթվի դրությամբ: Ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների իրական արժեքները որոշվում են՝ դրանցից առաջացող բոլոր դրամական ներհոսքերն ու արտահոսքերը համապատասխան շուկայական տոկոսադրույքներով զեղչելու միջոցով:

Ղեկավարության կարծիքով, ֆինանսական հաշվետվություններում ճանաչված ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությունների հաշվեկշռային արժեքները մոտավորապես հավասար են իրենց իրական արժեքներին:

19. Պայմանական դեպքեր

19.1. <u>Ապահովագրություն</u>

Ապահովագրությունը ՀՀ-ում համեմատաբար նոր է և դեռ զարգացման փուլում է գտնվում, և ապահովագրության շատ ձևեր դեռ հասանելի չեն: Հիմնադրամն ամբողջովին ապահովագրված չէ իր գործունեության ընդհատման կամ էական կրճատման համար, երրորդ անձանց հանդեպ հնարավոր պարտավորությունների գծով՝ կապված հնարավոր միջադեպերի արդյունքում գույքային, բնապահպանական կամ առողջական վնասների հետ: Քանի դեռ Հիմնադրամը համապատասխան ապահովագրական պաշտպանություն ձեռք չի բերել, առկա է ռիսկ, որ որոշ ակտիվների վնասումը կամ պարտավորությունների առաջացումը կարող է էական բացասական ազդեցություն ունենալ Հիմնադրամի գործունեության և ֆինանսական վիճակի վրա:

19.2. <u>Հարկային անորոշություններ</u>

Հարկային համակարգը ՀՀ-ում աչքի է ընկնում օրենսդրական հաճախակի փոփոխություններով, պաշտոնական պարզաբանումներով, որոնք երբեմն անհստակ են, հակասական կամ տարընթերցումների տեղիք տվող: Հարկային մարմինները կարող են ստուգել Հիմնադրամի հարկային հաշվարկներն ու հայտարարագրերը և իրավունք ունեն տույժ-տուգանքներ նշանակելու:

Նշված հանգամանքները կարող են առաջացնել նշանակալի հարկային ռիսկեր: Հիմնադրամի ղեկավարությունը վստահ է, որ իր հարկային պարտավորությունները հաշվարկել է պատշաճ կերպով՝ հիմնվելով ՀՀ հարկային օրենսդրության, հարկային հարաբերություններ կարգավորող այլ իրավական ակտերի՝ իր մեկնաբանության վրա: Այնուամենայնիվ, հարկային մարմինների մեկնաբանությունները կարող են տարբերվել սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս հիմք ընդունած մեկնաբանություններից, և, եթե հարկային մարմինները կարողանան պարտադրել իրենց մեկնաբանությունները, ապա դրանց ազդեցությունը կարող է նշանակալի լինել:

19.3. <u>Դատական գործեր</u>

31 դեկտեմբերի 2019թ. դրությամբ Հիմնադրամի դեմ հարուցված կամ Հիմնադրամի կողմից հարուցված դատական գործեր չեն եղել:

19.4. <u>Երաշխավորություններ</u>

31 դեկտեմբերի 2019թ. դրությամբ Հիմնադրամը տրամադրած կամ ստացված երաշխավորություններ չի ունեցել:

20. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր

2020թ. մարտի 16-ին ՀՀ կառավարությունը արտակարգ իրավիճակ հայտարարեց՝ COVID-19

համաճարակի կանխարգելման նպատակով: Մայիսի 14-ին արտակարգ իրավիճակն երկարացվեց ևս 30 օրով՝ մինչև հունիսի 13-ը: Արտակարգ իրավիճակով պայմանավորված փակվել են դպրոցները, համալսարանները, արգելվել է ավելի քան 20 մարդու ներկայությամբ միջոցառումների իրականացումը, մուտքը ՀՀ տարածք, ինչպես նաև ձեռնարկվել են թեստավորման և կարանտինային միջոցառումներ են: Արդյունքում Հիմնադրամը դադարեցրել է դասընթացների իրականացումը՝ պայմանավորված հանրապետությունում առկա պանդեմիկ իրավիճակով: Հիմնադրամը հնարավորինս շարունակել է դասընթացների կազմակերպումը առցանց հարթակներում: Թեև ստեղծված իրավիճակը անխուսափելիորեն ազդում է լսարանային և գործնական դասընթացների վրա, այնուամենայնիվ, Հիմնադրամը չի ակնկալում, որ իրավիճակը կարող է իր գործունեության անընդհատության խախտման պատճառ հանդիսանալ:

ՀԻՄՆԱԴՐԱՄ FOUNDATION 02577018

Տնօրեն

Արթուր Գրիգորյան

Գլխավոր հաշվապահ

Հայկ Բալանյան

15 հունիսի 2020թ.

Signer: ՀՀ ՊԵԿ
Date: 30.06.2020 20:22